# ՆՈՐ-ԴԱՐ

№ 15 ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 6 փետրուարի | 1890 | Երեքշաբթի 6 փետրուարի ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 15

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամսով՝ 3 ր. 50 կ., ամսով՝ 1 ր., հատով՝ 5 կոպեկի։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութիւնն հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի ուր օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների գաւն 2 կ., երեսփոխեի համար կրկնապատիկ։


ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

# ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱ ԹԵՐԹ
Թիֆլիսում
ՆԵՐԿԱ 1890 ԹՈՒԱԿԱՆԻՆ
(ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)
Հրատարակւում է նոյն դէպքով և ծրագրով
Խմբագրութիւնը ստանում է և սեպհական հեռագիրները


Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.

Եւրոպայի, Թիւրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից սկսեալ։

Բաժանորդ են գրւում ինչպէս «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Բարօնսկայա փողոցում, պօստ-հեռագրատան դէմ, տուն № 12.

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ


## ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Դրաշարների մեծ կարիք ունենալով, սրանով ծանուցանում ենք, որ հայ լեզուի դրաշարներ ենք որոնում «Նոր-Դար»-ի համար։ Դրաշարութեան պաշտօն որոնողները իսկոյն կարող են տեղ ստանալ։ Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրատունը, Բարօնսկայա փողոց, տուն № 12։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Հեռագրներ.

Քրոնիկոն.—Լուրեր։ Հոգու ապրումների մարմնի վրայ։

Թղթակցութիւններ.—Արդահան։

Քաղաքական.—Քաղաքական լուրեր։

Խառն լուրեր.

Սրանկոյեան հեռագիրներ։

Տիզլիսեան։

Յայտարարութիւններ։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԴՈՐՁԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 փետրուարի.—«Journal de St. Pétersbourg»-ը հաղորդում է, որ առաջիկայ թատրոնական սեզօնից կայսերական թատրոններում գերմանական խումբ այլ ևս չպիտի պահուի։

ՊԱՐԻԶ.—Արքայականների ածած ցոյցերի պատճառով հասարակապետութեան նախագահ Կարնօն հնար չունի իւր նախաձեռնութեամբ Օրլէանեան հերցոգին ներելու, և որովհետև հերցոգը իւր կողմից հրաժարւում է ներում խնդրելուց, ուստի իրերի դրութիւնը շատ խճճուած է։

ՁՈՆԶԻԲԱՐ.—Զանզիբարի սուլթանը վախճանեցաւ։

ԱԴԻԳԱՆԱ.—Յունուարի 26-ին ճակատամարտ տեղի ունեցաւ Ֆիջիակ Սէյիւբի և Բաս-Ալուլայի միջև. վերջինս պարտութեան մատնուեց և, ինչպէս ասում են, ծանր վիրաւորուած է։

ԲԵՐԼԻՆ.—Այսօր պրուսական պետական խորհուրդը բացուեց կայսրի ճառով, որի մէջ մատնացոյց է արած բանուորների ոյժը կամայական և անսահման կերպով շահագործելու առաջն առնելու խնդրի լրջութեան և պատասխանատուութեան վրայ։ Կայսրն ի միջի այլոց ասաց. «Երեխաների աշխատութիւնը, որին սահման պէտք է դրուի, կանանց դրութիւնը—այս ամենը կարելի է բարեփոխել և կարգի ձգել. միևնոյն ժամանակ պէտք է քննել, թէ որքան կարող է արդիւնագործութիւնն իւր ծախսերն ապահովել՝ առանց համաշխարհային վաճառականութիւնում վնասներ կրելու. նուազ նշանաւոր չէ նաև բանուորների ներկայացուցչութեան հաստատումը. կառավարութեան հետ միասին ուսումնարանն ու եկեղեցին էլ պէտք է բարերար գործունէութեան ընդարձակ ասպարէզ լինին»։ Այնուհետև ասուած է, որ անմիջապէս պետական խորհրդի քննութեան առաջարկուելիք օրինագիծները քննելու համար կայսրն առանձին բաժանմունքներ է հաստատելու առևտրի և արհեստների և ներքին գործերի վարչութեան համար։ Այդ բաժանմունքներում կայսրը գիտակ անձեր է նշանակում։ Բաժանմունքները պէտք է գումարուին փետրուարի 14-ին և 26-ին։ Կայսրը զեկուցանող նշանակում է՝ առաջնում—Միքէլին, իսկ երկրորդում—գաղտնի խորհրդական Իհնկէին։

ՊԱՐԻԶ.—Բուքարեստից ստացուած տեղեկութիւններին նայելով, բումինական պատգամաւորների ժողովը մերժել է Բրատիանօի և նրա մինիստրութեան բոլոր առաջարկները։ Ընդհանուր կարծիք է, որ Ռումինիայի նոր մինիստրութիւնը կազմուելու է Ռոզետտի Բրատիանուի ներկայացուցչութեամբ։

ՎԻԵՆՆԱ.—Ֆրանց-Յովսէփ կայսրը ընդունեց Ռումինիայի նոր մինիստրութեան անդամներին, որոնք ներկայացրին նրան իրանց ծրագիրը։ Կայսրը ասաց, որ ինքը ոչ մի փոփոխութիւն չի ցանկանում ներքին քաղաքականութեան մէջ, որ ինքը հաստատ կերպով կը պահպանի Ռումինիայի հետ դաշնակցութիւնը և որ նա ամենայն ուշադրութեամբ կը հետևի Ռումինիայի ներքին գործերի ընթացքին։

ՍՕՖԻԱ.—Ռուսահպատակ Նագդենն արձակուած է՝ Պանիցայի դործում նրա մասնակցութիւնն ունենալուն ապացոյց չլինելու պատճառով։

ՊԵՐԵՐԲՈՒՐԳԻ, 4 փետրուարի.—«Гр.»-ը հաղորդում է, որ շուտով մտադրութիւն կայ բարձրագոյն ուսումնարանների պրօֆէսսօրների և դասատուների իրաւունքները համալսարանների պրօֆէս սօրների իրաւունքներին հաւասարելու։

«Нов. Вр.» լուր է հաղորդում, թէ Զերնօգօրիայի իշխանը փետրուարին կայցելէ Պետերբուրգ. մի քիչ առաջ կգայ նրա ամուսինը,

ՎԵՆՆԱ.—Բատտեմբէրգեան պրինց Ալէքսանդրի աւստրիական ծառայութեան մտնելու լուրը ուղիղ չէ։

(Տրեկ. հեռ. երրորդ երեսում)

## ՔՐՈՆԻԿՈՆ

Թէպէտև հայոց կանանց բարեգործական ընկերութիւնն որոշել էր դոյն ընկերութեան օգտին ներկայացնելու «Մասլենն» կօմեդիան փետրուարի 3-ին, բայց ներկայացումը չկայացաւ։

—

Քաղաքային չինարար մասնաժողովը որոշել է առաջարկելու քաղաքային խորհրդին՝ արձակելու քաղաքիս երկու բաժնի տեխնիկներից մէկին, որովհետև դործ չկայ, ի զուր տեղն աւելորդ ռոճիկ է տրւում տեխնիկին։

—

Փետրուարի 4-ին կայացաւ Կօջօրի քաղաքագլխի ընտրութիւնը։ Քաղաքագլուխ ընտրուել է Ե. Խալաթեանը, իսկ կանդիդատ՝ Մ. Միրզոյեանը։

—

Ստացանք «Արարատ»-ի սոյն 1890 թուականի յունուարի համարը։ Սոյն համարում ի միջի այլոց տպուած է Կարապետ եպիսկոպոս Տէր-Դաւթեանցի մահագոյժը։ Հանդուցեալը երկարատև հիւանդութիւնից յետոյ վախճանել է յունուարի 5-ին, 63 տարեկան հասակում։

—

Կովկասի զուղատնտեսական ընկերութեան փոխ-նախագահի զեկուցման վրայ ընկերութեան նախագահ իշ. Ա. Մ. Դոնդուկով-Կօրսակովը Կովկասեան ցուցահանդէսի կարդադրիչ յանձնաժողովը լուծուած հրատարակեց, պատուիրելով ցուցահանդէսի բոլոր գործերը յանձնել զուղատնտեսական ընկերութեան և այդ կարդադրութիւնը, տեղական թերթերի ասելով, հաղորդել տեղական նահանգապետներին, պետական կալուածների մինիստրութեան և հրատարակել ի տեղեկութիւն տեղական բնակիչների։

—

Անդրկովկասում հողային սեպհականութեան մասին յարուցուած վէճերը դլխաւորապէս առաջանում են կալուածների սահմանների անորոշ լինելուց։ Անցեալ 1888 թուին արդարադատութեան մինիստրը զննելով Անդրկովկասի դատական հաստատութիւնները, դալիս է այն համոզման, որ հարկաւոր է այդ վէճերին չատ չուտով լուծում տալու համար Անդրկովկասի դատարանների անդամների թիւն աւելացնել և այդ իմաստով էլ խնդրագրուած է լինում։ Սոյն տարուանից Անդրկովկասի թէ նահանգական դատարաններում և թէ Թիֆլիսի դատական պալատում դատաւորների թիւն աւելանալով, յիշեալ դատարաններում, ինչպէս հաղորդում է «Кав.»-ը, կազմւում են յատկապէս սահմանորոշ բաժիններ, որոնք բացառապէս պէտք է զբաղուին հողային վէճերի քննութեամբ։

—

Հարաւային Ռուսիայից դիմել են Կովկասեան զուղատնտեսական ընկերութեան՝ խնդրելով դումի սերմ ուղարկել իրենց։ Այդպիսի խնդիրներ ստացուած են Տաւրիկեան նահանգի, Կիևի և, ինչպէս տեղական թերթերը հաղորդում են, մի քանի ուրիշ զուղատնտեսական ընկերութիւններից։

—

ԳՕՐԻՍԻՑ.—Ուղիղ մի տարի սրանից առաջ, տեղիս բնակիչները, մի նշանաւոր օր ժողոված ս. եկեղեցում, անհամբեր սպասում էին արժանապատիւ հօր քարոզին. քարոզչի խօսքերը բաւականին ազդու էին, այնպէս որ բոլոր ունկնդիրներն յուզուեցան և բոլորն էլ միաբերան աղաղակեցին, երբ եկեղեցուց դուրս եկան, թէ անպատճառ թող լինի. խօսքը նոր կառուցանելիք դպրոցի մասին էր։ Բոլշևական ոգևորութիւնը ամեն բան որոշեց, միայն կատարելն էր մնում. Ամբողջ հասարակութիւնն իւր կողմից յատկացրեց յոդուտ նոր կառուցանելիք դպրոցին 300 դեսեատին վարելահող, իսկ հարուստ դասակարդը որոշեց դրամով օգնել։ Մինչև անդամ գործի պարագլուխ կանդնողները խոստացան և հաստատապէս վճռեցին, որ հակառակ դէպքում, իրենք պատրաստ են իրենց բոլոր ուժով գործը գլուխ բերելու՝ հենց իրենց գրպանից դնելով։ Ցրուեցան թէ չէ, այնուհետև բոլորի խօսքն էլ, քամու տարածի պէս եղաւ. բոլորն էլ սառեցան ն՛գործից յետ կանդնեցին։ Թէ ինչն է պատճառը այդպէս շուտ հրաժարուելուն, հաստատ չդիտենք, բայց, ինչպէս ասում են, իբրև թէ այդ անցքից յետոյ, երբ լրագրի մէջ յիշատակել են այդ մասին և խրախոյս ներքանց, մոռացմամբ պարոններից մէկի անունը չեն գրել, որի համար պարոնը սաստիկ նեղացել է և ասել է, իբր թէ, «որովհետև ինձ հետ այդպէս վարուեցան, ես գիտեմ այսուհետև ինչ կանեմ»։ Ահա մի այսպիսի պատճառով գործը գնա մինչև հիմայ քնած է և մեր նախկին պարոններից և ոչ մէկը չէ էլ ուզում մտածել այդ խնդրի մասին։

Եթէ յիրաւի այն պարոնի սրտնեղութիւնը և նրա կողմից արդելքն եղաւ պատճառ այդ խնդիրը քնացնելու, նշանակում է, որ մեր հասարակութիւնը չատ ողորմելի դրութեան մէջ է մտաւորապէս և դեռ ևս դիտակցութիւն չունի հասարակաց բարոյական կրթութեան մասին։

Թողնենք որ այդ օրհասկալութիւնը մեր միջից հեռանայ. բնական է, ապագայի համար մտածենք։ Ամաչենք գոնէ մեզանից ոչ հեռու Ախալթեան աղքատիկ գիւղից, որ անհրաժեշտ համարից դպրոց ունենալ և կարճ միջոցում ամեն ինչ գլուխ բերից. իսկ մենք դեռ ուզում ենք չարունակել մեր թմրութիւնն և անտարբերութիւնը։

—

Օլթիում ապրող մի թուրք կին ցանկութիւն է յայտնել ուսուցչանոցի բնդունելու։ Ջնայելով, որ նա ամուսին և երեք երեխայ ունի, բայց նրանց թողած ապրելիս է լինում մի յոյնի տանը, ուր սովորում է կարդալ և հետաքրքրւում է աւետարանով։ Յունուարի 6-ին, Յորդանան գնալու միջոցին, նա, ինչպէս հաղորդում են «Кав.»-ին, կամեցել է գեաը մտնել լողանալու համար, բայց արդելք են եղել։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ պ. Սիմէօն Գուլամիրեանցը մեզ հեռագրում է, որ փետրուարի 2-ին լոյս է տեսել «Արաքս»-ի երկրորդ գիրքը։

—

ԲԱԳՈՒԻՑ.—Վերջին չարաթներում նաւթագործարաններում կամ հանքերում հրդեհը մեծ վնասներ է տուել. մօտաւորապէս վնասը կարելի է հաշուել 50—60,000 ր.—ի միջի այլոց այրուել է նաև Արաֆելեան ընկերի նաւթաբուղխ չատրուանը։

—Ներկայումս կերօսինը ծախւում է մի նաւթակաթման ս. տեսակը 162—163 րուբ., է. տեսակը 141—142 րուբ., մնացորդը 66 ր., հում նաւթը 7 կոպ. պուդը։

—Բագուի անունը լսելով աննման օր երկաթուղու գնացքները մանուկնե-

ՄԱՐԴԱԿԱՆ (Շարատ. տես թիվ 14)։—

Մարդկանց մեծ մասը ամենայն ինչ ուզում է անել ուրիշների համար, միայն թե ոչինչ չանի իր համար։ Ամենայն ինչ ուզում է տալ, միայն թե ոչինչ չառնի։ Ամենայն ինչ ուզում է ընդունել, միայն թե ոչինչ չտա։ Ամենայն ինչ ուզում է ստանալ, միայն թե ոչինչ չվճարի։ Ամենայն ինչ ուզում է ունենալ, միայն թե ոչինչ չկորցնի։ Ամենայն ինչ ուզում է գտնել, միայն թե ոչինչ չորոնի։ Ամենայն ինչ ուզում է ուրախանալ, միայն թե ոչինչ չտխրի։ Ամենայն ինչ ուզում է ապրել, միայն թե ոչինչ չմեռնի։

—

Ինչ որ ես ասում եմ, ես ասում եմ ոչ թե որպես ինձ հարցնողի, այլ ինքս ինձ։

—

Ես ինձ համար ոչ մի բան չեմ ուզում, ոչ մի բան չեմ խնդրում, ոչ մի բան չեմ սպասում։ Ես ինձ համար ոչ մի բան չեմ ուզում, ոչ մի բան չեմ խնդրում, ոչ մի բան չեմ սպասում։ Ես ինձ համար ոչ մի բան չեմ ուզում, ոչ մի բան չեմ խնդրում, ոչ մի բան չեմ սպասում

իրաքանչյուր յայդ առաջ է բերում չընչաքրլութիւն վէմ և ընդհանրապէս դժուարութեան զգայման միջոցին ստամոքսում զգում ենք ճնշումն։ Հոգևկան ամեն տեսակ սաստիկ խռովութիւնը չափազանց նուազեցնում է արտաքին զգայարանքների զգայութիւնը, մանաւանդ չօշափողութիւնը։ Եւ առաւել անզգայ է դարձնում դէպի արտաքին ցաւը։ Ամեն ոք այս հեշտ կարող է տեսնել իւր սեպհական դիտողութիւններով։ Հոգու յափշտակուած վիճակն առանձնապէս նպաստում է զգայութեան նուազանալուն։ Պատերազմում իրենց զործով յափշտակուած զինուորները չաճախ չեն զգում իրենց ծանր վէրքերը, ցաւը, մինչև որ չէ անցնում այդ յափշտակութիւնը։ Նոյնն է տեղի ունենում ժողովրդական զանազան չարժումների, մանաւանդ կրօնական ծիսակատարութիւնների ժամանակ։ Սրանով են բացատրում գլակիրների, գերվիշների անզգայանալու դէպքերը, որոնք ենթարկում են իրենց ամեն տեսակ չարչարանքների։ Ցոյզերի ապրելակերպութիւնն արտայայտում է և մի ուրիշ ձևով՝ զգայութեան չգաղչրջմամբ։ Ցայսնի են դէպքեր, որ գլուխները իրենց մօտից անցնող գնդակից կամ ռումբի կտորից վախեցած սաստիկ ցաւ են զգացել մարմնի այս կամ այն մասում և մինչև անգամ զգացել են, թէ ինչպէս իրենց մարմնից սրիւը հոսում է գետի նման, մինչդեռ նրանք իրենք ողջ և անվնաս են մնացած։ Մի զինուոր մինչև անգամ զգացել է, որ իւր երկու ոտները գնդակը պոկել է, բայց գնդակը զարնուելով նրա մօտ, մսել էր նրա ոտների տակի գետինը և փոս էր գոյացրել, որի մէջ ընկել էր նա։ Ցոյները զգում են արտաքին զգայարանքների վրայ. այդպիսի ազդեցութեան օրինակներին ամեն քայլափոխին հանդիպում ենք։ Երբեմն այդ ազդեցութիւնը չատ մեծ է լինում։ Մանաւանդ չաճախ են կրկնում լուսթեան անզգայութիւնը հոգեկան որև է սաստիկ խռովութեան ազդեցութեամբ՝ ինչպէս սարսափի, կսկիծի, ուրախութեան։

(Վերջը միւս անգամ)

Ա. Դ.

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԴԱՀԱՆ, 24-ն յունուարի.—Վերջապէս երկար թմրութիւնից յետոյ սթափուեցինք։ Հոգարարձութիւնն իրադործնց իւր մտադրութիւնը։ Այժմ մենք դպրոցում ունենք անչարժ և սեփական բեմ ներկայացման համար, որի վրայ կարող ենք բարեդործական նպատակով մի քանի ներկայացումներ տալ։ Ի հարկէ ըեմը նոր լինելով, պակասութիւններ էլ չատ կունենար, ուստի այդ իսկ պատճառով առաջի ներկայացումը պիտի լինի բեմին համապատասխան։ Յունուարի 20-ին, չաբաթ երեկոյեան, նորակառոյց բեմը տեսաւ իւր առաջին ներկայացումը։ Խաղացուեց երեք մոդելի «Կրուսպատճառը եսէ», «Սրեք քաջեր» և «Մաթոյի կտակը»։ Ներկայացումն ընդհանրապէս աջող անցաւ։ Ժողովուրդը բաւական թուով էր, չնայելով այն արգելքին, որ մի քանի պարոններ չանք էին թափում առմամների վաճառմանը հակառակ հանդիսանալու։ Ընդհանուր մուտքը բացի ծախսերից հղաւ 70 ր. Եթէ մեր ժողովուրդը երկպառակած չլինէ և բոլորը չաճախէին, իմ կարծիքով կատարեալ մէկ ու կէս անգամ աւելի այդ դումարից։ Եւ եթէ նոյն ներկայացումները չարունակուին և սիրով ժողովուրդը չաճախէ, հաւատացած ենք, որ քիչ ժամանակւայ ընթացքում համ բեմի վրայ հոգարարձութեան արած ծախսը դուրս կղայ, համ էլ բեմի մի քանի պակասութիւնները կարելի է լրացնել և գպրոցն էլ պահել անխափան, որի հաստատուն պահելու և ապագան բարուքելու նպատակով չենուսից բեմը։ Աւելորդ եմ համարում յիշել նրա բարոյական օգուտները, մանաւանդ արդահանդիսների համար։ Մի քանի պարոններ էլ կարծելով, որ ներկայացման իրագործումն իրենից է կախուած, ուստի եթէ չատ քաչուին, ուրեմն չի իրագործուիլ։ Հենց այդ իսկ պատճառով զանազան պատճառներ բերելով հրաժարուեցին մասնակցելուց։

Մեր նոր թատերասէրների խմբի մէջ կային չատերը, որոնք թէև առաջին անգամն էին բեմ բարձրանում, ինչպէս օր. Տ. Խօջաէյնեաթեանը, սակայն ազատուած աւելի լաւ կատարեցին իրենց դերերը։ Շնորհակալութեան արժանի են Տ. Խօջաէյնեաթեանց և Տ. Ափիանց, որոնք տեսնելով, որ տեղացիների անտարբերութեան պատճառով ներկայացումը գլուխ չի գալու, ժողովրդի խօսակցութիւնը, «տատ-կօսէն» առ ոչինչ համարելով յանձն առան դեր կատարելու և գլուխ բերին աջողութեամբ։ Արժանի է շնորհակալութեան նաև պ. Ափիանցը, որ իւր դերը աջողութեամբ կատարեց։ Շնորհակալութեան արժանի են նաև բոլոր մասնակցող անդամները, որոնք ջանացին և ի կատար ածեցին առաջին ներկայացումը, ինչպէս յարգելի հոգաբարձութիւնը, որ ժողովրդի «տատ-կօսէ»-ներին ուշ չդարձնելով չենուց բեմը։

Անտրականներում նուագում էին ասլական նուագարանները մի քանի պարոններ, ի թիւս որոնց և մեր հոգաբարձու պարոններից մէկը նուագում էր «չանուռ» (քնամանի), միւսը «դաշրա» երգեցողութեան հետ միասին, իսկ երրորդ անձնաւորութիւնը՝ պ. հոգաբարձուն, «թառ»։ Պարզ ածողը իւր գիտիչ ձայնով և երգերով զբաւում էր իւրեն՝ հաստարակութեան ուշադրութիւնը։ Ժամը 12-ին մօտ վերջացաւ ներկայացումը և ժողովուրդը գրուեց թատրոնից լաւ տպաւորութեան ներքոյ։

Պատկառում նկատելի էր լինում այր մարդիկների սակաւութիւն, որի պատճառը, ինչպէս լսեցի մէկից, այն էր՝ որ «զայֆխանէքում» նստած հէքիաթի էին ականջ դնում։

Այստեղ «զայֆխանէքը» դալիս են թափառական նուագկրգռներ և «զարադեօզ» խաղացողներ, որոնք երեկոները նուագում են կամ հէքիաթ պատմելով են անցկացնում։ Եւ երբ որ մեր ժողովուրդը հէքիաթի ձայնը լսում է թէ չէ, վազ է տալիս ներկայ լինելու, որտեղ մի քանի դատարկաբանութիւններ լսելուց յետոյ, հետութեամբ գլուխները հանում են մանկթանողները և հէքիաթասղի առաջն են գցում։ Իսկ երբ որ նոյն պարոնին առաջարկում ես թատրոնի մի տոմսակ վերցնել և թատրոն յաճախել, նա սկսում է տրտունջներ յայտնել և հայհոյանքներ թափել դերասանների վրայ, ասելով՝ «ինձ փող պետղից է, փող լինի պինու կտամ կլսեմ կամ կերթամ հէքիաթին ականջ կանեմ։ Մի՞թէ մեր թատրոնը «զայֆխանէքից» էլ վատ տեղ է։ Նրանք այնչափ չեն ուզում հասկանալ, որ այն դերասանները, որոնք տանջւում են, անվարձ աչխատում են, հասարակութեամբ համար են աչխատում, իսկ իրենք անտարբեր և սառն են վերաբերուում։

Մէկ էլ խիստ զգալի էր ազգային կաթոլիկ հաստքի բացակայութիւնը. դեղի համար մի հոգի անգամ չկար գըտնել։ Նրանց չյաճախելու պատճառը երկու է. մէկ որ նրանք աւելի չուտով կմահանան քանթէ իրենց զրպանից փող կտան. և հենց այդ է պատճառը, որ մինչ յետ ընկած են ապրում. երկրորդ՝ զօրաւոր պատճառն այն է, որ նրանք խոթի աչքով և թշնամութեամբ են վերաբերում թէ դէպի մեղ, թէ դէպի մեր գպրոցը, թէ դէպի մեր թատրոնը և վերջապէս թէ դէպի ազգային մի որևէ հանդէս։ Ցուսով եմ, որ վերջապէս կթողնեն նրանք իրենց մոլար և թխիր գաղափարները և կմտնեն այն բոլոր ուղիները, ինչ որ ազգային է, կրօնականը մէկ կողմ թողնելով։ Մինչ մեր պարծանքը նրանցը չէ՞ և կամ նրանց պակասութեան վրայ չպէ՞տք է ցաւինք։

Բաց. Սոզ.

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

ԴԱՆԻԱ.—Մօտերքս պատգամաւորների ժողովի ընտրութեան միջոցին պարտութիւն կրելով, դանիական կառավարութիւնը մտադիր է արմատական փոփոխութեան ենթարկել ընտրողական չրջանների կազմութիւնը, այսինքն՝ մտադիր է ընտրողական չրջանները միծացնելով, նրանց թիւը քչացնել, յուսալով, որ դրանով կառավարութիւնը իրական ճնչում կը դործ դնէ ընտրողների վրայ։ Նոր ընդխմադիր կուսակցութիւնը, ի հարկ է, թչնամաբար կը վերաբերուի այդ ձեռնարկութեան, այնպէս որ մինիստրութեան նախագահ Էստրուպը ստիպուած կը լինի արքայական ժամանակաւոր կարգադրութիւն հրատարակել։ Այդպիսի կարգադրութիւն պատգամաւորների ժողովի հաւանութիւնը չստանալով, հետևաբար և օրէնքի բեւեռութիւն չունենալով, հնչտութեամբ կարող է երկրում զժգոհութիւն և անկարգութիւն առաջացնել։

—Վերջին ժամանակներս խնդիր է ծագել Կոպենհագը պօրտ-ֆրանկո դարձնելու, որը մեծ նչանակութիւն կարող էր ունենալ Դանիայի մայրաքաղաքի առևտրական կեանքի համար։ Քաղաքային վարչութիւնը բանակցութիւններ է սկսել այդ նախագիծը գործ դնելու, որի իրագործման համար 10 միլիոն կրոն (մօտ 5 միլիոն րուբլի) հարկաւոր կը լինի։

ՖՐԱՆՍԻԱ.—Պարիզեան գրաֆիկ որդին, Օրլէանեան հերցոգը, յունուարի 26-ին գնաց Պարիզ և միւս օրը առաւօտեան ներկայանալով զինուորական վարչութեան յայտարարեց, որ ցանկանում է ֆրանսիական զինուորական ծառայութեան մէջ մտնել։ Նրան ուղարկեցին զինուորական մինիստրի մօտ, բայց նա այնտեղ մերժում ստացաւ։ Այն ժամանակ նա գնաց հերցոգ Լիւինեյլի տունը, ուր և ժամը 6½ կալանաւորեցին նրան և տարան ոստիկանապետի մօտ, որին նոյնպէս յայտարարեց, թէ կատարեալ հաւատակ դառնալով Ֆրանսիա է եկել կատարելու ամեն մի ֆրանսիացու պարտաւորութիւնը, այսինքն զինուորական ծառայութեան մտնել։ Ոստիկանապետը նրան պատասխանեց, որ օրէնքը հրամայում է իրեն կալանաւորել նրան։ Այնուհետև նրան տարան բանտ, ուր խիստ քաղաքավարի են վարուում հետը։ Նրան կալանաւորեցին այն օրէնքի հիման վրայ, որով Ֆրանսիայում երբեմն թագաւորող անների պլուխներին և նրանց ուղիղ ժառանգներին արգիլուում է ֆրանսիական հողը ոտք դնել։ Յունուարի 27-ին մինիստրների խորհուրդը ընդեց Օրլէանեան հերցոգի խնդիրը և որոչեց գործ դնել 1880 թ. յունիսի 22-ի օրէնքը, որի զօրութեամբ հերցոգը՝ Պարիզեան գրաֆի աւագ որդին և ժառանգը դատի է մատնուում։ Նոյն օրը հերցոգին հանեցին 8-րդ պալատի ուղիչ դատարանի առաջ՝ որպէս յանցագործութեան տեղում բռնուած յանցաւոր, ուր կրկին յայտնելով իւր ինչ նպատակով Ֆրանսիա գալը, լսնդրեց, որ գործ յետաձգեն, որովհետև ուզում է փաստաբան վարձել։

ՀԱՐԵՇՏԱՆ.—«Riforma» թերթի Հաբէչտանի թղթակցի ասելով Շոայի Մինիլիք թագաւորի կայսր թագադրուելու հանդէսը կատարուել է հերոդեական ձևով կազմուած ծրագրի համաձայն։ Նախընթաց օրը երեկոյեան եկեղեցում հաւաքուում է երկրի ամեն կողմերից հաւաքուած հոգևորականութիւնը և եպիսկոպոսի առաջնորդութեամբ հանուում է կատարում Առաւօտեան եկեղեցի է գալիս Մենելիքը իւր առուտու հետ և օծուում է եպիսկոպոսի ձեռքով։ Պատարագից յետոյ նոր Նեգուս-Նեգէստին ինքն իւր ձեռքով թագը դնում է իւր գլուխը և ամուսնու հետ նստում գահ, որ եկեղեցու բակումն է պատրաստած լինում։ Այնուհետև նրա առաջից անցնում է բոլոր զօրքը։ Զօրքի մի մասը արմաւենի է բռնած լինում ձեռքին, իսկ միւս մասը հրացան։ Այդ միջոցին հրատարակում են Նեգուսի չնորհը՝ ներել բոլոր քաղաքական յանցաւորներին, որից յետոյ զօրքն աղաղակում է. «կեցցէ չատ տարի Մենելիք թագաւորը, նրա հրամանները պիտի կատարուին»։ Այնուհետև հանդիսական խումբը հոգևորականների երգերով, ժողովրդի ուրախական աղաղակներով և ամբողջ բանակի ուղեկցութեամբ գնում է կայսերական պալատ, որ ամֆիթէատրոնի ձևով է չինած։ Այդ գնացքի միջոցին 101 անգամ թնդանօթ են արձակում։ Այդ օրուայ հանդէսն աւարտում է պալատում մեծ բանկէտ կազմելով և զօրքին հիւրասիրելով։ Երեք օրից յետոյ ուղղով նոյն ծրագրով կատարում է կայսրուհու թագադրութիւնը՝ միայն այն նպատակաւոր, որ թնդանօթից փոխանակ 101 անգամի 13 անգամ են արձակում, իսկ յետոյ էլ հրացան արձակում։ Մենելիք կայսրը կրկին հիւրասիրում է զինուորներին, իսկ կայսրուհին իւր պալատական կանանց համար պարահանդէս է կազմում։

ԳԵՐՄԱՆԻԱ. — Ին. Բիսմարկի տեղ Բէյնի նահանգի նախագահ Ֆօն-Բելլէպշի առևտրական մինիստր նչանակուելը ջերմ խորհրդածութիւնների նիւթ է դարձել գերմանական մամուլի համար։ Ազատամտականների մի քանի օրգանները այդ բանը վերագրում էին որպէս թէ Ին. Բիսմարկի հեղինակութեան ընկնելուն, բայց դա առաւել ցանկութեան քան իրողութեան բացատրութիւն էր։ Շատ չատ կարելի է այսքանն ասել, որ կանցլերը ծերացել է և անկարող է միաժամանակ վարել և՛ արտաքին քաղաքականութիւնը և՛ առևտրական վարչութիւնը, սակայն չպէտք է մոռանալ, որ առաջ էլ Ին. Բիսմարկը միայն ընդհանուր վերահսկողութիւն ունէր այդ մինիստրութեան գործերի վրայ։ Իսկ ինչ վերաբերում է այդ պաշտօնում Ին. Բիսմարկի յաջորդին, լրագրների մեծ մասը նրան գլուխ մարդ է համարում, միևնոյն ժամանակ և վարչական ընդհանուր անձն՝ առանց պահպանողական գոյնի։ Որպէս Պրուսական նախագահ, Ֆօն-Բելլէպշը խիստ ծանրախոհ և խոհեմ ընթացք բռնեց բանուորների գործադուլի միջոցին։ Այսպէս օրինակ նա ընդիմացաւ Վէստֆալիայի ածուխ-նախագահ Համմայստէրի զօրք ուղարկելուն և զինու զօրութեամբ գործադուլ եղողներին զսպելու ցանկութեանը և զօրքերը հեռացնել տուեց այն տեղից։ Նոր մինիստրը — պրուսական մինիստրութեան մէջ ամենաերիտասարդներից միներն է։

—

—Լօնդոնում Աֆէնքից ստացած դիպլոմատիքական դեկուցումներից երևում է, որ Տրիկուպիսի մինիստրութիւնը հաստատ վճռել է չընդունել այն դրութիւնը, որ Սուլթանի վերջին ֆիրմանով հաստատած է Կրետէում, և անձայն պատրաստուել հարկաւոր միջոցին կրետէցիների օգտին անկախ միջոցներ գործ դնելու։ Միչին եւրոպական պետութիւնները չատ անգամ պարզ կերպով յայտնց կառավարութեանը զգալ են տուել, թէ այդպիսի դէպքում Յունաստանը իւր պատասխանատուութեամբ կը գործէ, Ֆիրմանը ետ կոչելու համար պետութիւնների պահանջ անելու լուրը սխալ է։ Անգլիական կառավարութիւնը բաւականանում է միայն Կրետէում կատարուած դէպքերին ուշի ուշով դիտելով։

—«Kölnische Zeit.»-ը լուր է հաղորդում, որ իբրև թէ ռուսաց կառավարութիւնն առևտրական հիւպատոս է նչանակելու իւր կողմից Կամերունում և Զանզիբարում։

—Մահմետական իրլանդական ազգային միութիւնը հրատարակել է իւր հայտնի թիւը, որից երևում է, որ Ամերիկայի իրլանդացիները 3½ տարուայ ընթացքում իրլանդական չարժման օգնելու համար 25 միլիոն գօլար (50 միլիոն րուբլի) են գործ դրել։ Ասում են, որ Պարնէլը «Times»-ի դէմ վարած դատի ծախսերը ծածկելու համար 8 միլիոն գօլար (16 միլիոն րուբլի) է առացել։

—Մարիոր Լիբլբար 10 պօռուչիկի և 30 փոխ. սպաների հետ Բերլինից ուղևորում է Զանզիբար։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Աֆրիկայի Սահարա անապատում երեք տարուայ անընդհատ չորութիւնից յետոյ, որի միջոցին ոչ մի կաթիլ անձրև չէր եկել, այժմ հանարեա թէ ամեն օր յորդ անձրև է տեղում։ Ձանազարհորդների գրութիւնն անտանելի է. օազիսների բնակիչների անունը, որոնք հում աղիւսից են չինած, բոլորովին քանդուել, ցեխի կոյտեր են կազմել, այնպէս որ ժողովուրդը բացօթեայ է ապրում։

*** Պրինց պռուսիական։—«Deutsche Rundschau»-ում հրատարակուած է Վիլհելմ I կայսրի թղթակցութիւնները դեներալ Նայմէրի հետ, որը երկտասարդ պրինցի մանրութիւն էր։ Այդ թղթակցութիւնը վերաբերում է պրինց Վիլհելմին, որ յետոյ թագաւոր և ապա կայսր դարձաւ, դէպի Եղիսաբէթ Բաճիվիլը տարած սէրին։ Այդ նամակներից երևում է, որ պրինց Վիլհելմ բուռն սիրով վառուած էր դէպի Ե. Բաճիվիլը, որը յետոյ վանք մտաւ։ Պրինց Վիլհելմը համոզուած էր, որ թագաւորը երբէք չպիտի համաձայնի այդ անհաւասար ամուսնութեան, սակայն թագաւորը խղճաց իւր որդու վրայ և ուզում էր համաձայնել այդ ամուսնութեան, բայց պետական խորհուրդը վճռաբար բողոքեց դրա դէմ՝ Ֆրիդրիխ մեծի որոչման վրայ յենուելով։ Այն ժամանակ թագաւորը հրամայեց որդուն յետ կոչել, բայց տեսնելով նրա տանջանքները, կրկին մեղմացաւ և որոչեց զործը գլուխ բերել Ել. Բաճիվիլին Հոհենցօլլերան պրինց Աւգուստի որդեկիր դարձնելով։ Բայց մինիստրների քաջ սիրան այստեղ էլ անյողդողդ էր, նրանք յայտնեցին, որ որդեգրութեամբ արեան զանազանութիւնը չի բարձրիր Խոզ պրինց Վիլհելմը տափտած հազար խոնարհելու իւր դաժան ճակատագրին և նա, զգացած կերպով Նայմէրին նկարագրում է իւր վիչտը՝ միևնոյն ժամանակ յայտնելով այն համոզումը, թէ իւր գերքի մէջ հղող մարդիկ իրենց չեն պատկանում և պէտք է, ինչ էլ որ լինի, կատարեան իրենց կրքերը սանձել ամեն բանի մէջ լոկ պետական չահերն ի նկատի ունենալով։

## ԵՐԿՈՑԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Հեռագրական գործակալութենից)

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 փետրուարի.—Պետերբուրգի երդուեալ հաւատարմատարների ընդհանուր ժողովը միաձայն մերժեց երդուեալ հաւատարմատարների օգնականների գործունէութիւնը սահմանափակելու նախագիծը և օգնականների խնդիրը կանոնաւորելու համար որոշեց առանձին յանձնաժողով կազմել։

ՊԱՐԻԶ.—Երեկ կատարուեց պատգամաւորների ժողովի չհաստատած Սենալի գեպարտամէնտի վեց պատգամաւորների տեղ նոր ընտրութիւն, որի միջոցին նրանցից հինգը կրկին ընտրուեցան, թիւս որոնց նաև Լօբը, որ 10,191 ձայն ստացաւ 4953 ձայնի դէմ, որ Լիսագարէն ստացաւ. Բէլլևալը, որ 12,022 ձայն ստացաւ 9829 ձայնի դէմ, որ Թօբլէն ստացաւ։ Նակէն պիտի քուէրկուի. նա 3840

Ձայն ստացաւ արմատականների և պատեհականների թեկնածուի Բուբնևիլլի և Դելօմբրի դէմ, որոնցից առաջինը 2575 ձայն, իսկ միւսը 1761 ձայն ստացաւ։ Այս անգամ ընտրողները աւելի քիչ էին եկել քան վերջին ընտրութեան միջոցին։ Անկարգութիւն չեղաւ։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

Փետրուարի 27-ին Բագուի զինուորական պալատում աճուրդ է նշանակուած Ղուբայում 200 հոգու բանտի չինութիւնը կապալով տալու համար։ Մանրամասնութիւնները Բագուի դատական պալատում։

Փետրուարի 15-ին Թիֆլիսի նահանգական վարչութեան մէջ աճուրդ է նշանակուած 540 խորանարդ սաժէն խիճ (Թիֆլիս և Մանգլիսի խճուղու համար) պատրաստելու գործը կապալով տալու համար (145,49 ր. 77 կոպ. գնահատուած)։ Մանրամասնութիւնները Թիֆլիսի նահանգական վարչութեան չինարարական բաժնում։

### ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՍԵՒ ԾՈՎԻ ՎՐԱՑ

*Բաթումից նաւը գնում է*

Հինգշաբթի, ուղիղ գծով, Նովօրոսէյսկի և Նաւահանգիստների վրայով, ճաշից յետոյ ժամը 4-ին.

Շաբաթ, շրջանաւոր գծով, բոլոր նաւահանգիստների վրայով, երեկոյեան ժամը 8-ին.

Երկուշաբթի, Աբխազական գծով, կ. Պօլիս, երեկոյեան։

*Բաթումում գալիս է*

Երեքշաբթի, Օդեսայից, շրջանաւոր գծով, կէս գիշերին մօտ։

Ուրբաթ, Օդեսայից, ուղիղ գծով, Սեբաստ և Նովօրոսէյսկի վրայով, առաւօտը։

Երեքշաբթի, կ. Պօլսից, առաւօտը։

*Փոթիից Բաթում գնում է*

Հինգշաբթի, առաւօտեան ժամը 9-ին, Ղբիմ-Կովկասեան ուղղակի շոգենաւին.

Շաբաթ, առաւօտեան ժամը 9-ին, Ղբիմ-Կովկասեան շոգենաւին։

*Բաթումից Փոթի գնում է*

Ուրբաթ, } կէս օրից յետոյ, ժամը
Կիրակի, } մօտ 2-ին։

Երշանաւոր ապրանքները նաւը
Գալիս է Փոթի, երկուշաբթի առաւօտը։
Գնում է Բաթում, չորեքշաբթի։

### Պատահած երկաթուղային ճանապարհի վրայ

*Թիֆլիսից դուրս է գալիս*

Հինգշաբթի օդանաւ ունեցող վագոնը, առ. 8 ժամին. գիշերում է Մցխեթում. միւս օրը երեկոյեան 8 ժամին հասնում է Վլադիկաւկազ.

Երեքշաբթի օդանաւ ունեցող սիմիքուսը, երեկոյեան ժամը 4-ին, առանց գիշերելու, միւս օրը երեկ. ժամը 7-ին հասնում է Վլադիկաւկազ։

*Վլադիկաւկազից դուրս է գալիս*

Հինգշաբթի առ. ունեցող վագոնը դուրս է գալիս առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մցխեթում, միւս օրը երեկոյեան ժամը 8-ին գալիս է Թիֆլիս։

Երեքշաբթի օդանաւ ունեցող սիմիքուսը երեկոյեան ժամը 8-ին, առանց գիշերելու, միւս օրը երեկոյեան ժամը 10½-ին հասնում է Թիֆլիս։

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՄԵՂՔԵՐ»**

*խրատական դրուած՝ Յանախմանութիւամբ իրենց ջղային կազմուածքը խանգարածների համար։*

**Հեղ. Դ-ր Լայբինգ**

*ստուերին հրատարակութիւն Դ-ր Բ-լի*

Գինն է 1 րուբ.

Այս օգտակար գիրքը պարունակում է իր մէջ շատ խրատներ, թէ՝ ինչպէս կարող են ազատուել հիւանդներն վերոյիշեալ ախտի վերնասակար հետեւանքներից և վերականգնել իանգարուած ոյժերը և առողջութիւնը։ Այս գիրքը թոյլատրուած է Մոսկուայի գլաւքրնանական կոմիտէից։

Հրատարակութեան պահեստն է Օտտօ Ասպերգէրի մօտ Լայպցիգում (Otto Asperger Leipzig) (Սաքսոնիա)։ Օտարերկրացիները ճանապարհածախս չեն վճարում։ 52—48 (M.)

ՄԱՍՆԱԳԷՏ ՀՐԱՉԵԱՑ ՇԱՀԲԱԶԵԱՆՑԸ, ԱՐԴԵՆՅԲԱՑ Է ԱՐԻ.

## ՎԻՄԱԳՐԱՏՈՒԻՆ (ԼԻՕԳՐԱՖԻԱ)

և ընդունում է ամեն տեսակ պատուէրներ՝—նօտաներ, այցետոմսեր, հարսանեաց հրաւէրներ, գրասենեակի հաշիւներ, գինու, օղիի և ամեն տեսակ իրեղէնների եաւլիկներ, որոնց շքեղութեան և գնի արժանութեան կը հաւաստիանան պատուէր տուողները։

Թաւառներից կարող են դիմել. Тифлисъ, Литографія Р. Шахбазянъ, Барятинская ул., д. № 8.

10—10

ՀԱՆԴԷՍ
# ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ
ԹԵՐԹ

Երրորդ և չորրորդ գրքերը լոյս կտեսնեն ներկայ 1890 թ. կանոնաւորապէս իւրաքանչիւր կիսամեակում։ Ամեն մի գիրքը բաղկացած կլինի 32—25 թերթից։ Բաժանորդագինն է երկու գրքի համար 3 րուբլի, իսկ առանձին ամեն մէկը 2 ր.

Յանկացողները դիմում են հետեւեալ հասցէով. Москва, Газетный пер., д. Лианозова, Типографія М. Бархударянъ.

Մ. Բարխուդարեանց,

8—2

**ДЛЯ ИЗБѢЖАНІЯ ПОДДѢЛОКЪ**
**имѣется нашъ вензель при семъ изображенный**
**на каждой коробочкѣ**

# PAPIER WLINSI

*Несомнѣнное Средство*
**для излеченія**

**Насморка, Раздраженій груди и горла, Ревматизма и проч.**

**ВЪ ПАРИЖѢ у ГГ.: WISLIN и К°] ул. Seine, № 31.**

15—6

## ОТКРЫТА ПОДПИСКА

НА ЕЖЕДНЕВНУЮ ГАЗЕТУ

# „КАВКАЗСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ“

Содержаніе газеты: частныя объявленія и рекламы, которыя принимаются къ напечатанію на русскомъ, французскомъ, нѣмецкомъ, армянскомъ, грузинскомъ и татарскомъ языкахъ; свѣдѣнія, имѣющія справочный характеръ, какъ то: получаемыя въ Тифлисѣ телеграммы «Сѣвернаго Агентства», биржевыя, промышленныя, торговыя и коммиссіонныя справки, полицейскій, думскій и судебный биллютени съ извѣстіями о банкротствахъ и торговой несостоятельности, некрологи, списки недоставленныхъ телеграммъ, такса на продукты, календарь, время отхода и прихода поѣздовъ з. ж. дороги и пароходовъ на Черномъ и Каспійскомъ моряхъ, а также срочныхъ экипажей по военно-грузинской дорогѣ; врачи и врачебная помощь, театри, зрѣлища, увѣдомленія о засѣданіяхъ обществъ, актахъ, юбилейныхъ и другихъ торжествахъ и народныхъ праздникахъ, свѣдѣнія о полученныхъ грузахъ и товарахъ и т. под.

## ПОДПИСНАЯ ЦѢНА:

**Городскимъ подписчйкамъ:**

На годъ съ доставкой на домъ. 1 р. 20 к
На полгода. . . . . 80 к.

**Иногороднымъ подписчикамъ:**

На годъ съ пересылкою. 1 р. 80 к.
На полгода „ . 1 „ —, „

Городскіе подписчики, получающіе какія либо изданія, выходящія въ г. Тифлисѣ, платятъ, по предъявленіи ими квитанцій на подписку въ кон. тору газеты „Кавказскія Объявленія“ и въ отдѣл. лишь 60 к. въ годъ.

Для прочтенія „Кавказскія Объявленія“ предлагается публикѣ въ вагонахъ тифлисск. трамвая, въ подъѣзжающихъ къ Тифлису поѣздахъ закавк. ж. дор. изъ Баку и Батума и срочныхъ экипажахъ по военно-грузинской дорогѣ. За помѣщеніе объявленій взимается по 4 коп. со строки петита. Подписавшіеся же не газету „Кавказскія Объявленія“ при сдачѣ объявленій не менѣе 15 разъ, пользуются большою скидкою по соглашенію съ конторою. Траурныя объявленія лишь на первой страницѣ; плата за какды разъ по 2 рубля.

Контора и редакція газеты „Кавказскія Объявленія“ помѣщается на Гановской улицѣ. при конторѣ нотаріуса А. Г. Мамиконова, а отдѣленіе: на углу Головинскаго проспекта и Барятинткой улицы, въ павильонѣ Хиддекеля.

Адресъ для телеграммъ: Тифлисъ. „Кавказскія Объявленія„

5—2 *Редакторъ-Издательница Н. И. Сенко.*

50—9

Պարիզի բժշկական ճեմարանի անդամ
ՊԵԼԼԵՏԻԵԻ ԱՏԱՄ ՄԱԳՐԵԼՈՒ ՄԻՋՈՑԸ
ՊԵԼԼԵՏԻԵԻ ՕԴՕՆԻՆԸ

Սպիտակացնում է ատամը առանց նըբա արծնապակին փչացնելու.

Ամեն մի ափիկ կնքուած է երես սոյն գունանի կնքով։

ՊԵԼԼԵՏԻԵԻ ԷԼԷՔՍԻՐԸ

Ամրացնում է ընդերքը, խաղացնում է բերանը.

Ամեն մի ափիկ կնքուած է սոյն երես գունանի կնքով։

DENTIFRICES PELLETIER. Ce cachet doit être exigé comme garantie d'origine du produit.

Պատրաստւում է Լ. ՓԵԼԼԵՏԻԵ ԺՈՒ, 19, Rue Jacob, Paris.

Բոլոր դեղագործների և հոտաւահանելիքը ծախ. ունեն։

№ 4. (M.) 6—1

# ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
## Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է աշակերտներին ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ գիմնազիա, րեալական ուսումնարան, հոգեւոր և ներքինական ուսումնարան։

Ուսումնարանում ընդունւում են ԵՐԹԵՒԵԿՆԵՐ, ԿԻՍԱԹՈՇԱԿԱՒՈՐՆԵՐ ԵՒ ԹՈՇԱԿԱՒՈՐՆԵՐ,

Ուսումնարանում, բացի զանազան գիմնազիական առարկաներից, աւանդւում են այլ և այլ Հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն և լատիներէն լեզուներ։ Յանկացողները կարող են ԴԱՇՆԱՄՈՒՐԻ (բօյալ) վրայ ածել սովորել։ Դրա համար պանսիօնում կայ առանձին մասնագէտ ուսուցիչ։

Ընդունելութիւնը լինում է նաև յունուարից։

Հասցէն. Тифлисъ, Гановская ул., № 15. (Сололаки).

20—5

ՆՈՐ ԲԱՑՈՒԱԾ Է

# „ԲԷԼ-ՎԻԻ“

ԹԻՒՐՔԱԿԱՆ ԿՕՖԻ-ԲԻՒՍՕՐԱՆ

Գրաֆիկի փողոց, տուն Խիթարովի, «Սևերնըյէ նօմէրա» հիւրանոցի կողքին։

Պատիւ ունիմ առաջարկելու Թիֆլիսի հասարակութեան թէ տեղական և թէ եւրոպական այլ և այլ ճաշակով կերակուրներ, թրքական կօֆէ, թէյ և ամեն տեսակ խմիչքներ ընտիր տեսակներից։

Բէստօրանը լաւ հասարակութեան համար լինելով կատարելին տեղական լրագիրներ։ Առանձին հոգս կը տարուի մաքրութեան, ընտիր կահաւորութեան, թարմ մթերքի վրայ։

Գները մատչելի են, ամսով ճաշողների համար սակարկութիւն կը լինի։

Մի ամսից բէստօրանի վերևում կունենամ լաւ կահաւորուած և մաքուր հիւրանոց։

Յակոբ Ղլիանոսեան 10—5

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1890 г. НА

# ТЕХНИЧЕСКІЙ СБОРНИКЪ

и

# ВѢСТНИКЪ ПРОМЫШЛЕННОСТИ.

ЕЖЕМѢСЯЧНЫЙ ЖУРНАЛЪ

ОТКРЫТІЙ, ИЗОБРѢТЕНІЙ И УСОВЕРШЕНСТВОВАНІЙ ПО ВСѢМЪ ОТРАСЛЯМЪ ПРОМЫШЛЕННОСТИ.

Программа изданія:

*1. Правительственныя распоряженія и узаконенія, насающіяся фабрично—заводской промышленности, желѣзныхъ дорогъ и т. п. промышленныхъ предпріятій. 2. Машиностроеніе и механическое дѣло. 3. Механическая технологія,—ручная и машинная обработка металловъ, дерева, волокнистыхъ матераловъ и пр. 4. Химическая технологія. 5. Желѣзнодорожный отдѣлъ. 6. Архитектура. — Инженерное и строительное искусства. 7. Электро-техническій отдѣлъ. 8, Санитарное дѣло. 9. Кустарный отдѣлъ. 10. Графическія искусства. 11. Техническое образованіе. 12. Обозрѣніе дѣятельности торово-промышленныхъ учрежденій и техническихъ обществъ. Біографіи выдающихся дѣятелей техники и промышленности. 13. Критика и библіографія. 14.* **Смѣсь:** *Техническія замѣтки о новстяхъ техники, рецепты, совѣты, описанія различныхъ новыхъ составовъ и средствъ, патентованныя и секретныя средства и пр. 15. Справочный отдѣлъ: вопросы и отвѣты; торговыя свѣдѣнія; статистическія свѣдѣнія; данныя о спросѣ и предложеніи. Свѣдѣнія о новыхъ привилегіяхъ. 16. Объявленія въ текстѣ и въ видѣ особыхъ приложеній.* **Приложенія:** *чертежи, книги, брошюры спеціальнаго характера.* **Примѣчаніе.** *Непремѣнное помѣщеніе въ каждомъ выпускѣ журнала статей по* **Всѣмъ** *отдѣламъ не обязательно.*

**Подписная Цѣна:** на годъ съ доставкой 16 руб.; на полгода—9 руб.

**Адресъ редакціи: Москва, Малая Димитровка, д. Алексѣевой.**

Редакторъ-Издатель Ученый Инженеръ-Механикъ

*К. А. Казначеевъ.*

3—3

Дозволено цензурою. Тифлисъ, 5-го Февраля 1890 г. *Տպարան Կաւկազ լրագրի գրասենեակի* Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова.